

Հաճախ տրվող հարցեր

«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստանի» Անհատական ինտերնետային բանկային ծառայություն

Ի՞նչ է Ինտերնետային բանկային ծառայությունը

Ինտերնետային բանկային ծառայությունը օնլայն համակարգ է, որը հնարավորություն է ընձեռում ապահով եղանակով կատարել բանկային գործարքներ Բանկի պաշտպանված ինտերնետային կայքի միջոցով: Որո՞նք են առավելությունները: Այլևս սահմանափակված չեք լինի Բանկի աշխատանքային ժամերով/օրերով և ստիպված չեք լինի Ձեր ժամանակը վատնել հերթերում: Այս ծառայությունը բանկային գործարքներ իրականացնելու թերևս ամենադյուրին և հարմարավետ եղանակն է, որը հասանելի է օրական 24 ժամ, շաբաթվա բոլոր օրերին, տարեկան 365 օր: Համակարգը թույլ է տալիս օնլայն եղանակով դիտել «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստանում» սպասարկվող Ձեր բոլոր հաշիվները՝ ներառյալ մնացորդները, քաղվածքները, վճարումների մանրամասները և այլն: Այն ապահով է և ամենակարևորը՝ Դուք կարող եք օգտագործել այն այնքան հաճախ, որքան ցանկանում եք:

Համակարգի առավելություններից են նաև.

- Ձեր գումարների ավելի ճկուն կառավարում
- Հաշիվների ապահով օգտագործում տանից կամ արտասահմանից

Որո՞նք են այն բանկային գործարքները, որ կարող եմ իրականացնել Ինտերնետային բանկային ծառայության միջոցով

Ինտերնետային բանկային ծառայությունը Ձեզ հնարավորություն է ընձեռում ավելի դյուրին կառավարել Ձեր հաշիվները: Այն նաև ապահովում է հսկողության ավելի բարձր մակարդակ մնացորդների, փոխանցումների և ժամկետային ավանդների նկատմամբ: Ծառայության բազմաթիվ հնարավորությունները ներառում են.

- Դիտել «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստանում» սպասարկվող Ձեր հաշիվներն օրական 24 ժամ, շաբաթվա բոլոր օրերին
- Կատարել բանկային գործարքներ, ստուգել մնացորդները և հաշիվների պատմությունը
- Կատարել փոխանցումներ Ձեր հաշիվների միջև կամ ցանկացած հաշվին ամբողջ աշխարհում
- Կատարել վարկի մարումներ
- Բացել ընթացիկ և խնայողական հաշիվներ ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով, Եվրոյով, ՌԴ Ռուբլով և Բրիտանական ֆունտով
- Բացել ժամկետային ավանդներ և փոփոխել դրանց մարման հանձնարարականները
- Կատարել կրեդիտ քարտերի վճարումներ
- Ստեղծել, փոփոխել և հեռացնել պարբերական/ապագա փոխանցումներ/վճարումներ
- Ստանալ էլ.քաղվածքներ և էլ.ավիզոներ
- Ստանալ SMS ծանուցումներ գործարքների և հաշիվների վերաբերյալ
- Ստանալ հենց Ձեր համար նախատեսված տեղեկատվություն/առաջարկներ բանկային ծառայությունների վերաբերյալ
- Նորացնել անձնական տվյալները



- Պատվիրել չեկային գրքույկներ և դադարեցնել չեկային վճարումներ
- Ուղարկել և ստանալ ծածկագրված հաղորդագրություններ

Ո՞ր լեզուներով է տրամադրվում Ինտերնետային բանկային ծառայությունը
Ինտերնետային բանկային ծառայությունը տրամադրվում է հայերեն և անգլերեն:
Ծառայության յուրաքանչյուր էջի վերևի աջ անկյունում գոյություն ունի հղում դեպի համակարգի հայերեն և անգլերեն տարբերակները:

Ինչպե՞ս կարող եմ աջակցություն ստանալ Ինտերնետային բանկային ծառայության վերաբերյալ

Ծառայության վերաբերյալ աջակցություն ստանալու բազմաթիվ եղանակներ գոյություն ունեն: Ինտերնետային բանկային ծառայության յուրաքանչյուր բաժնի վերևի աջ անկյունում գոյություն ունի “Օգնություն” հղում, որը ոչ միայն տրամադրում է ամբողջական տեղեկատվություն Ծառայության բոլոր գործառնությունների վերաբերյալ, այլ նաև պարունակում է օրինակներ և օգտակար խորհուրդներ:

Դուք նաև կարող եք մեզ հաղորդագրություն ուղարկել՝ օգտագործելով “Սպասարկման կենտրոն”-ի “Ուղարկել հաղորդագրություն” հղումը:

Կարող եք նաև զանգահարել Հեռախոսային կենտրոն +374 (60) 655 444

հեռախոսահամարով: Մեր աշխատակիցներն ուրախ կլինեն օգնելու Ձեզ: Հեռախոսային կենտրոնի աշխատանքային ժամերն են. Մեր հեռախոսային կենտրոնն աշխատում է շուրջօրյա:

Բաժանորդագրում Ինտերնետային բանկային ծառայությանը և մուտք համակարգ
Որո՞նք են Ինտերնետային բանկային ծառայությունից օգտվելու նախապայմանները
Ինտերնետային բանկային ծառայությունից օգտվելու համար անհրաժեշտ է.

Գործող հաշիվ

«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստանում» սպասարկվող գործող հաշիվ և ԱԳՄ (ATM) քարտ:
Ինտերնետային կայքում գրանցվելու համար անհրաժեշտ է Ձեր ԱԳՄ (ATM) քարտի տվյալները և անձնական ծածկագիրը (PIN):

Համակարգիչ

PC տեսակի համակարգչի չափանիշներ.

- MS Windows 2000/XP Home Edition/XP Professional Edition գործառնական համակարգ:
Նախընտրելի է նշված համակարգերի ամենանոր տարբերակները
- Pentium (500 MHz) կամ ավելի հզոր պրոցեսոր
- 1024x768 լուսակետերի խտությամբ մոնիտոր
- 128MB կամ ավել օպերատիվ հիշողություն
- 52MB կամ ավել ազատ տարածություն կոշտ սկավառակակրի վրա

MAC տեսակի համակարգչի չափանիշներ.

- Mac OS X 10.4 կամ ավելի նոր գործառնական համակարգ
- 1024x768 լուսակետերի խտությամբ մոնիտոր
- Intel x86, PowerPC G3, G4, կամ G5 պրոցեսոր
- Առնվազն 128MB օպերատիվ հիշողություն
- 200B կամ ավել ազատ տարածություն կոշտ սկավառակակրի վրա

Անհրաժեշտ է նաև 128-bit ծածկագրման (encryption) մակարդակով զննարկիչ:

Ծառայությունը համատեղելի է հետևյալ զննարկիչների հետ.

- Internet Explorer 6
- Internet Explorer 7*
- Mozilla Firefox 2 կամ ավելի նոր տարբերակ (PC տեսակի համակարգիչների համար)**
- Mozilla Firefox 2.5 կամ ավելի նոր տարբերակ (MAC տեսակի համակարգիչների համար)**

Ծառայությունը կարող է նաև համատեղելի լինել այլ զննարկիչների դրանց տարբերակների հետ, սակայն խնդրում ենք ի նկատի ունենալ, որ այլ զննարկիչների օգտագործումը խիստ անցանկալի է, քանի որ այդ դեպքում դա անխուսափելիորեն կանդրադառնա ծառայության որակի և ապահովության մակարդակի վրա:

(*) Այս ծրագրային ապահովման նորագույն տարբերակները կարող են ներլցվել Microsoft®-ի հետևյալ կայքից՝ www.microsoft.com : Ծրագրային ապահովման տեղադրման հետ կապված բոլոր հարցերով խնդրում ենք դիմել Microsoft® ընկերությանը:

(**) Այս ծրագրային ապահովման նորագույն տարբերակները կարող են ներլցվել Mozilla-ի հետևյալ կայքից՝ www.mozilla.com : Ծրագրային ապահովման տեղադրման հետ կապված բոլոր հարցերով խնդրում ենք դիմել Mozilla ընկերությանը:

Ինչպե՞ս բաժանորդագրվել Ինտերնետային բանկային ծառայությանը

Ծառայությանը բաժանորդագրվելու համար պետք է գրանցվել Էյչ-Էս-Բի-Սի-ի ինտերնետային կայքում՝ օգտագործելով **ԱԳՄ (ATM) քարտի 12 նիշանոց համարը** և **6 նիշանոց անձնական ծածկագիրը (PIN):**

Գրանցման գործընթացը բավականին պարզ է.

- Սեղմեք "Գրանցվել":
- Համապատասխան դաշտերում մուտքագրեք Ձեր ԱԳՄ (ATM) քարտի համարը (առանց բացատների կամ զծիկների), թողարկման համարը և անձնական ծածկագիրը (PIN):
- Ստեղծեք օգտագործողի անուն, որը պահանջվելու է Ինտերնետային բանկային ծառայություն մուտք գործելիս:
- Ընտրեք հիշվող հարց և նշանակեք հիշվող պատասխան: Հիշվող պատասխանը պահանջվելու է Ինտերնետային բանկային ծառայություն մուտք գործելիս: Հետագայում Դուք ցանկացած ժամանակ կարող եք փոփոխել Ձեր հիշվող հարցը և պատասխանը:



- Ընտրեք անվտանգության հարցեր և նշանակեք անվտանգության պատասխաններ: Անվտանգության հարցերը/պատասխանները պահանջվելու են Ձեր հիշվող հարցի/պատասխանի օնլայն փոփոխության համար այն դեպքերում, երբ Դուք մոռանաք դրանք:
- Ձեր ուշադրությանը կներկայացվեն Ծառայության օգտագործման պայմանները: Խնդրում ենք ուշադիր ծանոթանալ դրանց և սեղմել “Ընդունել”, եթե համաձայն եք դրանց, կամ “Մերժել”, եթե չեք ցանկանում ընդունել դրանք: Վերջին դեպքում գրանցման գործընթացը կդադարեցվի:
- Հաջորդ էջում Դուք հնարավորություն կունենաք ընտրել Ձեր բոլոր հաշիվները (բացառությամբ էյչ-էս-Բի-Սի Բանկի կրեդիտ քարտերի)՝ Ծառայության միջոցով դիտելու/կառավարելու համար:
- Ցանկության դեպքում կարող եք նաև մուտքագրել էլեկտրոնային փոստի Ձեր հասցեն և բջջային հեռախոսի համարը (հեռախոսահամարը մուտքագրելիս խնդրում ենք պահպանել հետևյալ ձևաչափը՝ 374XXXXXXX (374+կոդ+բջջային հեռախոսի համարը): Նշված դաշտերի լրացումը թեև պարտադիր չէ, բայց ցանկալի:
- Գրանցման այս վերջին քայլին Ձեզ կներկայացվի ծանուցում և Ձեր անվտանգության սարքը ստանալու վերաբերյալ ցուցումներ:

Հետագա աջակցություն ստանալու համար խնդրում ենք զանգահարել մեր Հեռախոսային կենտրոն հետևյալ հեռախոսահամարով՝ +374 (60) 655 444:

Ես բարեհաջող ավարտել եմ Ինտերնետային բանկային ծառայության գրանցման գործընթացը, կարո՞ղ եմ օգտվել համակարգից

Ոչ, գրանցման գործընթացը բարեհաջող ավարտելուց անմիջապես հետո Դուք չեք կարող մուտք գործել Ինտերնետային բանկային ծառայություն՝ պարզապես մուտքագրելով Ձեր նշանակած օգտագործողի անունն ու հիշվող պատասխանը: Ձեր իսկ ապահովության և անվտանգության համար Ինտերնետային բանկային ծառայության օգտագործումն ավտոմատ կերպով կասեցվում է մինչև այն պահը, երբ Դուք կստանաք Ձեր անվտանգության սարքը: Ձեր անվտանգության սարքն ստանալուց և ակտիվացնելուց անմիջապես հետո Ինտերնետային բանկային ծառայությունը պատրաստ է Ձեր օգտագործման համար:

Ես արդեն ստացել եմ իմ անվտանգության սարքը: Ինչպե՞ս կարող եմ ակտիվացնել այն Ձեր Անվտանգության սարքը օնլայն ռեժիմով ակտիվացնելու համար հետևեք ներքոնշյալ քայլերին՝

1. Մուտքագրեք Ձեր օգտագործողի անունը և սեղմեք **Մուտք** :
2. Մուտքագրեք Ձեր հիշվող պատասխանը և սեղմեք **Շարունակել**:
3. Մուտքագրեք Ձեր անվտանգության սարքի հետևի կոդն ու նշված սերիալային համարը համապատասխան դաշտում:
4. Դուք պետք է սահմանեք անվտանգության սարքի PIN կոդը(անձնական գաղտնի համարը)՝ հետևելով էկրանին ներկայացված հրահանգներին: Ամեն անգամ անվտանգության սարքը օգտագործելիս Ձեզանից կպահանջվի մուտքագրել այն:
5. Գեներացրեք և մուտքագրեք 6 նիշից բաղկացած անվտանգության ծածկագիրը՝ հետևելով էկրանին ներկայացված հրահանգներին և սեղմեք **Շարունակել**:



Ձեր Անվտանգության սարքը ակտիվացնելուն պես Դուք կարող եք օգտվել Ինտերնետային Բանկային ծառայություններից:

Լրացուցիչ տեղեկատվություն ստանալու համար զանգահարեք Ինտերնետային Բանկային Ծառայությունների սպասարկման կենտրոն +374 (60) 655 444 հեռախոսահամարով: Մեր հեռախոսային կենտրոնն աշխատում է շուրջօրյա:

Ես երեք անգամ սխալ եմ մուտքագրել հիշվող հարցը և/կամ անվտանգության սարքի անվտանգության ծածկագիրը, և իմ մուտքն արգելափակվել է: Որո՞նք են իմ գործողությունները Ձեր Ինտերնետային բանկային ծառայությունն ակտիվացնելու համար խնդրում ենք զանգահարել Հեռախոսային կենտրոն +374 (60) 655 444 հեռախոսահամարով: Հեռախոսային կենտրոնի աշխատանքային ժամերն են. Մեր հեռախոսային կենտրոնն աշխատում է շուրջօրյա:

Կարո՞ղ եմ արդյոք փոփոխել իմ հիշվող պատասխանն օնլայն եղանակով
Այո: Հիշվող պատասխանը փոփոխելու երկու եղանակ գոյություն ունի.

- Հիշվող պատասխանի և անվտանգության սարքի ծածկագրի մուտքագրման էջում սեղմեք “Մոռացե՞լ եք հիշվող պատասխանը” հղումը: Ճիշտ պատասխանելով երկու անվտանգության հարցերի՝ Դուք հնարավորություն կստանաք փոփոխել Ձեր հիշվող հարցը/պատասխանը:
- Ինտերնետային բանկային ծառայության “Ծառայություններ” բաժնում ընտրեք “Փոխել հիշվող հարցը և պատասխանը” գործառույթը:

Ես մոռացել եմ իմ օգտագործողի անունը, հիշվող պատասխանը և/կամ անվտանգության պատասխանները: Որո՞նք են իմ գործողությունները
Եթե մոռացել եք Ձեր հիշվող և անվտանգության պատասխանները, ապա դրանք փոփոխելու/վերականգնելու համար խնդրում ենք հիշվող պատասխանի և անվտանգության սարքի ծածկագրի մուտքագրման էջում սեղմել “Ձեր հիշվող պատասխանը փոփոխելու աջակցության կարիք ունե՞ք:” հղումը: Այնուհետև մուտքագրեք նոր հիշվող հարցը և պատասխանը, ինչպես նաև անվտանգության հարցերը և պատասխանները: Ձեր նոր անվտանգության տվյալներն ակտիվացնելու համար խնդրում ենք զանգահարել Հեռախոսային կենտրոն +374 (60) 655 444 հեռախոսահամարով: Հեռախոսային կենտրոնի աշխատանքային ժամերն են. Մեր հեռախոսային կենտրոնն աշխատում է շուրջօրյա:

Օգտագործողի անունը մոռանալու դեպքում խնդրում ենք այցելել մեր որևէ մասնաճյուղ:

Օնլայն անվտանգության սարք
Ի՞նչ է անվտանգության սարքը

Անվտանգության սարքը փոքր գործիք է, որի օգնությամբ օգտագործողը հաստատում է իր ինքնությունն Ինտերնետային բանկային ծառայությունից օգտվելիս: Անվտանգության սարքն ապահովում է լրացուցիչ պաշտպանության, որը հայտնի է որպես կրկնակի նույնականացում. օգտագործողի անունը և հիշվող պատասխանը նույնականացնում են օգտագործողին որպես անվտանգության սարքի տեր: Սարքը, իր հերթին, գեներացնում է ծածկագիր, որը նույնականացնում է օգտագործողին Ինտերնետային բանկային ծառայությունում: Սարքի ծածկագիրը պարբերաբար փոխվում է և տարբեր է ամեն մուտքի կամ ռիսկային գործարքների հաստատման դեպքում:



Ի՞նչի համար է անհրաժեշտ անվտանգության սարքը

Էյչ-Էս-Բի-Սի-ին մշտապես առավելագույն ուշադրություն է ցուցաբերում անվտանգության հարցերին: Անվտանգության սարքի Ձեր օգտագործումը նպատակ ունի պաշտպանել Ձեր հաշիվների չլիազորված օգտագործումից և ապահովել Ձեր տեղեկատվության գաղտնիությունը:

Ի՞նչի համար է անհրաժեշտ անվտանգության սարքի օգտագործումն օնլայն բանկային գործարքների իրականացման ընթացքում

Ռիսկային գործարքներ իրականացնելու ժամանակ անվտանգության սարքն ապահովում է Ձեզ լրացուցիչ պաշտպանությամբ, օրինակ՝ փոխանցումներ կատարելիս կամ գաղտնի տեղեկատվություն դիտելիս: Կրկնակի նույնականացումը երաշխավորում է ռիսկային գործարքների կատարման էլ ավելի բարձր պաշտպանության աստիճան: Նույնիսկ այն դեպքերում, երբ անվտանգության սարքը գտնվում է այլ անձի մոտ, այն չի կարող օգտագործվել, քանի որ Ինտերնետային բանկային ծառայություն մուտք գործելու համար անհրաժեշտ են նաև օգտագործողի անունը և հիշվող պատասխանը, որոնք գիտի միայն ինքը՝ օգտագործողը:

Ի՞նչպես պահպանել իմ անվտանգության սարքը

- մշտապես պահեք Ձեր անվտանգության սարքն ապահով վայրում, այնպես, որ այն միշտ Ձեր ձեռքի տակ լինի
- հեռու պահեք Ձեր սարքը հեղուկներից և բարձր ջերմաստիճանի ազդեցությունից

Անվտանգության սարքի կորստի կամ գողության դեպքում դրա փոխարինումը Բանկի կողմից կատարվում է լրացուցիչ վճարի դիմաց:

Ի՞նչ է անհրաժեշտ անել անվտանգության սարքի անսարքության, կորստի կամ գողության դեպքում

Նման դեպքերում խնդրում ենք զանգահարել Հեռախոսային կենտրոն +374 (60) 655 444 հեռախոսահամարով: Հեռախոսային կենտրոնի աշխատանքային ժամերն են. Մեր հեռախոսային կենտրոնն աշխատում է շուրջօրյա:

Հաշիվներ

Կարո՞ղ եմ արդյոք Ինտերնետային բանկային ծառայության միջոցով բացել ընթացիկ, խնայողական հաշիվներ և/կամ ժամկետային ավանդներ

Այո: Ծառայության միջոցով Դուք կարող եք բացել ընթացիկ, խնայողական հաշիվներ ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով, Եվրոյով, ՌԴ Ռուբլով և/կամ Բրիտանական ֆունտով և ժամկետային ավանդներ ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով և/կամ Եվրոյով: Տվյալ պահին գործող տոկոսադրույքներին կարող եք ծանոթանալ "Տոկոսադրույքների հարցում" մասում:

Կարո՞ղ եմ արդյոք նոր հաշիվներ ավելացնել Ինտերնետային բանկային ծառայության միջոցով հասանելի հաշիվների ցանկին

Ինտերնետային բանկային ծառայությունում գրանցվելու ընթացքում Դուք կարող եք ընտրել բոլոր այն հաշիվները, որոնք ցանկանում եք տեսնել/կառավարել Ծառայության միջոցով: Ինտերնետային բանկային ծառայության միջոցով հետագայում բացված բոլոր նոր հաշիվներն ավտոմատ կերպով կավելանան հաշիվների Ձեր ցանկում: Դուք նաև կարող եք ավելացնել կամ հեռացնել հաշիվներ՝ էջի ձախ մասում սեղմելով "Ծառայություններ", իսկ այնուհետև՝ "Ընտրել հաշիվներ" հղումը:

Կարող եմ արդյոք անվանափոխել իմ հաշիվները

Այո, Ձեր հարմարության համար կարող եք անվանափոխել Ձեր հաշիվները: Էջի ձախ մասում ընտրեք “Ծառայություններ”, այնուհետև՝ “Վերանվանել հաշիվներ”: Ձեր հաշիվների վերանվանումը չի անդրադառնա հաշիվների, մնացորդների կամ փոխանցումների վրա:

Արդյո՞ք իմ կրեդիտ քարտի մնացորդը ցուցադրվում է իրական ժամանակի ռեժիմում
Կրեդիտ քարտերի մնացորդը ներկայացվում է նախորդ բանկային օրվա դրությամբ

Ո՞րն է “Փոխանցվող գումար” և “Ներդրվող գումար” դաշտերի տարբերությունը

Եթե գոյություն ունեցող Ձեր հաշվի արժույթը նույնն է, ինչ նոր բացվող հաշվինը, ապա երկու դաշտերն էլ նույն նշանակությունը կունենան: Եթե գոյություն ունեցող հաշվի արժույթը տարբերվում է բացվող հաշվի արժույթից, ապա փոխանցվող գումարի արժույթը որոշվում է “Գումար” մասում նշված արժույթով:

Եթե Դուք ընտրեք “**Փոխանցվող գումար**” տարբերակը, մուտքագրվող գումարի արժույթը կլինի նույնը, ինչ էլքագրվող հաշվինը (“Ուղարկող հաշիվ” դաշտ): Օրինակ՝ Ձեր գոյություն ունեցող հաշվի արժույթն ԱՄՆ դոլար է, իսկ Ձեր նոր բացվող հաշվինը՝ ՀՀ դրամ: Եթե Դուք մուտքագրեք 500 “Փոխանցվող գումար” դաշտում, ապա մենք գոյություն ունեցող հաշվից կելքագրենք 500 ԱՄՆ դոլար, կփոխանակենք այն ՀՀ դրամի (այդ պահի դրությամբ կիրառելի արժույթի փոխանակման փոխարժեքով) և կբացենք Ձեր նոր հաշիվը 500 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ մնացորդով:

Եթե Դուք ընտրեք “**Ներդրվող գումար**” տարբերակը, մուտքագրված գումարի արժույթը կլինի նույնը, ինչ Ձեր նոր բացվող հաշվինը:

Օգտագործելով վերը նշված օրինակը՝ Ձեր նոր հաշիվը կբացվի 500 ՀՀ դրամ մնացորդով, իսկ գումարի՝ ԱՄՆ դոլարով համարժեքը կելքագրվի Ձեր ԱՄՆ դոլարի հաշվից՝ համաձայն այդ պահի դրությամբ կիրառելի արժույթի փոխանակման փոխարժեքի:

Վճարումներ և փոխանցումներ

Ինչպե՞ս ես կարող եմ կատարել կրեդիտ քարտի իմ վճարումները

Ծառայության միջոցով Դուք կարող եք կատարել «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստանի» կողմից թողարկված կրեդիտ քարտերի վճարումներ: Նախքան վճարում կատարելը, Դուք պետք է ավելացնեք կրեդիտ քարտը որպես շահառու: Շահառու ստեղծելու վերաբերյալ լրացուցիչ օգնություն ստանալու համար խնդրում ենք սեղմել “Օգնություն” հղումը “Ավելացնել շահառու” բաժնում:

Ե՞րբ եմ կատարվելու կրեդիտ քարտի իմ վճարումները

Մենք կուղարկենք Ձեր վճարման հանձնարարականները դրանց ներկայացման օրը (այն դեպքում, եթե դրանք ներկայացվել են մինչև աշխատանքային օրվա ավարտը): Ձեր գործարքը կկատարվի 1-2 աշխատանքային օրվա ընթացքում: Խորհուրդ ենք տալիս կատարել Ձեր կրեդիտ քարտի վճարումները վճարման ամսաթվից առնվազն մեկ օր առաջ:

Ինչպիսի՞ փոխանցումներ կարող եմ կատարել Ինտերնետային բանկային ծառայության միջոցով

Ինտերնետային բանկային ծառայությունը թույլ է տալիս կատարել փոխանցումների հետևյալ տեսակներ.

- Միջհաշվային փոխանցում - փոխանցում «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստանում» սպասարկվող Ձեր հաշիվների միջև

- Ներքին փոխանցում – փոխանցում Ձեր հաշվից «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստանում» սպասարկվող այլ հաշվին
- Փոխանցում ՀՀ-ի տարածքում – փոխանցում Հայաստանի Հանրապետությունում գործող այլ բանկում սպասարկվող հաշվին
- Միջազգային փոխանցում - փոխանցում արտերկրում գործող բանկում սպասարկվող հաշվին
- Վարկի մարում – փոխանցում վարկային հաշվին՝ մարման տարբեր եղանակներով

Որո՞նք են վճարումների և փոխանցումների իմ օրական սահմանաչափերը

Ինտերնետային բանկային ծառայությունում գրանցվելիս Ձեր գործարքների նկատմամբ կիրառվում են հետևյալ օրական սահմանաչափերը.

Գործարքի տեսակ	Օրական սահմանաչափ
Փոխանցում «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստանում» սպասարկվող Ձեր հաշիվների միջև	25,000,000 ՀՀԴ
Փոխանցում երրորդ անձանց հաշիվներին (չնշանակված շահառուներին) «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստանի» ներսում, ՀՀ տարածքում և/կամ միջազգային փոխանցում	25,000,000 ՀՀԴ
«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստանի» կողմից թողարկված կրեդիտ քարտի վճարումներ	25,000,000 ՀՀԴ

Դուք ցանկացած ժամանակ կարող եք օնլայն եղանակով նվազեցնել օրական սահմանաչափերը՝ էջի ծախս մասում սեղմելով «Ծառայություններ» բաժնի «Փոխել Ինտերնետային բանկային համակարգի սահմանաչափերը» հղումը: Սահմանաչափերի բարձրացման համար խնդրում ենք ուղարկել ծածկագրված հաղորդագրություն Ինտերնետային բանկային ծառայությունների միջոցով:

* Սահմանաչափերի բարձրացման դիմումն ենթակա է համապատասխան հաստատման:

Նշում. Անվտանգության նկատառումներից ելնելով երրորդ անձանց ուղղված փոխանցումների հնարավորությունն արգելափակվում է Ինտերնետային ծառայությունների միջոցով նմանատիպ գործարք 2 տարվա ընթացքում չիրականացնելու դեպքում: Այն վերաակտիվացնելու համար ևս անհրաժեշտ է ուղարկել ծածկագրված հաղորդագրություն Ինտերնետային բանկային ծառայությունների միջոցով:

Որո՞նք են փոխանցումների/վճարումների ներկայացման վերջնաժամկետները
 Ինտերնետային բանկային ծառայության այն վճարման հանձնարարականները, որոնք կներկայացվեն մինչև ստորև աղյուսակում բերված վերջնաժամկետները, կկատարվեն նույն օրը: Այն վճարման հանձնարարականները, որոնք կներկայացվեն գործարքների ներկայացման համապատասխան վերջնաժամկետներից հետո, ենթակա են կատարման հաջորդ աշխատանքային օրվա ընթացքում: Ոչ աշխատանքային օրերին (հանգստյան օրերին, տոներին և այլն) ներկայացված վճարման հանձնարարականները նույնպես ենթակա են կատարման հաջորդ աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ելքագրվող և մուտքագրվող հաշիվների արժույթները տարբեր են, և արժույթներից որևէ մեկի կամ երկուսի ներկայացման վերջնաժամկետը լրացել է, ապա նման գործարքներն ենթակա են կատարման հաջորդ աշխատանքային օրվա ընթացքում:

Գործարքի տեսակ	Հանձնարարականի ներկայացման վերջնաժամկետ (աշխատանքային օրերին)	Հանձնարարականի ներկայացման վերջնաժամկետ (ոչ աշխատանքային օրերին)
Միջհաշվային փոխանցում		
Արտարժույթի փոխանակում չպարունակող գործարք Արտարժույթի փոխանակում պարունակող գործարք	Վերջնաժամկետ չկա Ժամը 09:00 -ից մինչև 18:00	Վերջնաժամկետ չկա Հաջորդ աշխատանքային օրը
Փոխանցում ՀՀ-ի տարածքում		
Արտարժույթի փոխանակում չպարունակող գործարք Արտարժույթի փոխանակում պարունակող գործարք	15:00 (Հայաստանի ժամանակով) 15:00 (Հայաստանի ժամանակով)	Հաջորդ աշխատանքային օրը Հաջորդ աշխատանքային օրը
Միջազգային փոխանցում		
Արտարժույթի փոխանակում չպարունակող գործարք Արտարժույթի փոխանակում պարունակող գործարք	17:00 (Հայաստանի ժամանակով) 17:00 (Հայաստանի ժամանակով)	Հաջորդ աշխատանքային օրը Հաջորդ աշխատանքային օրը
Վարկի մարում		
Արտարժույթի փոխանակում չպարունակող գործարք Արտարժույթի փոխանակում պարունակող գործարք	17:00 (Հայաստանի ժամանակով) 17:00 (Հայաստանի ժամանակով)	Հաջորդ աշխատանքային օրը Հաջորդ աշխատանքային օրը

Ինչո՞ւ է պահանջվում մուտքագրել անվտանգության սարքի ծածկագիրը 500,000 ՀՀԴ գումարից բարձր միջհաշվային փոխանցում կամ կրեդիտ քարտի վճարում կատարելու ընթացքում
 Գործարքների վերահաստատման սահմանաչափը հավասար է 500,000 ՀՀ դրամի: Ձեր իսկ անվտանգության համար պահանջվում է մուտքագրել անվտանգության սարքի ծածկագիրը վերը նշված գործարքները կատարելիս:

Ինչպե՞ս կարող եմ Ինտերնետային բանկային ծառայության միջոցով արտարժույթային փոխանցում կատարել ՀՀ-ի տարածքում գործող բանկերի կողմից սպասարկվող հաշիվներին Փոխանցում ՀՀ-ի տարածքում գործող բանկի կողմից սպասարկվող հաշիվին կարող է կատարվել միայն տեղական արժույթով (ՀՀ դրամ): Եթե ցանկանում եք կատարել արտարժույթային փոխանցում ՀՀ-ի տարածքում, ապա պետք է ընտրեք “Ստացողը ՀՀ տարածքից դուրս” տարբերակը համապատասխան բացվող ցանկից:

Ո՞րն է “Նույնն է, ինչ ստացող հաշիվինը” և “Նույնն է, ինչ ելքագրվող հաշիվինը” դաշտերի տարբերությունը

“Նույնն է, ինչ ելքագրվող հաշիվինը” տարբերակն ընտրելու դեպքում մուտքագրված գումարը կլինի նույն արժույթով, ինչ ելքագրվող հաշիվն է (“Ուղարկող հաշիվ” դաշտը): Օրինակ՝ Ձեր ելքագրվող հաշիվ արժույթը Եվրո է, և Ձեր փոխանցումն ԱՄՆ դոլարով է, “Գումար” դաշտում Դուք մուտքագրել եք 1000: “Նույնն է, ինչ ելքագրվող հաշիվինը” տարբերակի ընտրությունը կնշանակի, որ շահառուին կփոխանցվի 1000 ԱՄՆ դոլարին համարժեք Եվրո: Այս դեպքում մենք կփոխանակենք 1000 Եվրո՝ համաձայն այդ պահի դրությամբ կիրառելի արժույթի փոխանակման փոխարժեքի և կկատարենք փոխանցումն ԱՄՆ դոլարով: Բոլոր կիրառելի գանձումները կկատարվեն ուղարկվող գումարից, քանի որ ըստ հանձնարարականի հաշիվը պետք է ելքագրվի 1000 Եվրոյի չափով: Միջազգային փոխանցման դեպքում “Նույնն է, ինչ ելքագրվող հաշիվինը” տարբերակի պահումները կլինեն.

- **Ես վճարում եմ ԲՈՒՈՐ գանձումները, շահառուն չի վճարում ՈՐԵՎԷ գանձում** – «Էյչ-Էս-Բի-Սի- Բանկ Հայաստանի» և միջնորդ/ստացող բանկի գանձումները կկատարվեն ելքագրվող 1000 Եվրոյից,
- **Ես վճարում եմ «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստանի»՝ շահառուն՝ այլ բանկի գանձումները** - ելքագրվող 1000 Եվրոյից կպահվեն միայն «Էյչ-Էս-Բի-Սի- Բանկ Հայաստանի» գանձումները:

“Նույնն է, ինչ ստացող հաշիվինը” տարբերակն ընտրելու դեպքում մուտքագրված գումարը կլինի նույն արժույթով, ինչ մուտքագրվող հաշիվն է (“Ստացող” դաշտը): Օրինակ՝ վերը նշված պայմաններում “Նույնն է, ինչ ստացող հաշիվինը” տարբերակի ընտրությունը կնշանակի, որ շահառուին կփոխանցվի 1000 ԱՄՆ դոլար: Մենք կփոխանակենք 1000 ԱՄՆ դոլարը Եվրոյի՝ համաձայն այդ պահի դրությամբ կիրառելի արժույթի փոխանակման փոխարժեքի, կելքագրենք այդ գումարը Ձեր Եվրոյի հաշիվից և կփոխանցենք շահառուին 1000 ԱՄՆ դոլար: Բոլոր կիրառելի գանձումներն ուղարկվող գումարի հետ միասին կկատարվեն ելքագրվող հաշիվից, քանի որ ըստ հանձնարարականի շահառուն պետք է ստանա 1000 ԱՄՆ դոլար: Միջազգային փոխանցման դեպքում “Նույնն է, ինչ ստացող հաշիվինը” տարբերակի պահումները կլինեն.

- **Ես վճարում եմ ԲՈՒՈՐ գանձումները, շահառուն չի վճարում ՈՐԵՎԷ գանձում** – «Էյչ-Էս-Բի-Սի- Բանկ Հայաստանի» և միջնորդ/ստացող բանկի գանձումներն ելքագրվող գումարի հետ միասին կկատարվեն հաճախորդի հաշիվից,
- **Ես վճարում եմ «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստանի»՝ շահառուն՝ այլ բանկի գանձումները** - հաճախորդի հաշիվից ելքագրվող գումարի հետ միասին կպահվեն միայն «Էյչ-Էս-Բի-Սի- Բանկ Հայաստանի» գանձումները:

Միջազգային փոխանցում կատարելիս շահառուի երկիրը/քաղաքը/բանկն առկա չեն համապատասխան բացվող ցանկերում: Որո՞նք են իմ գործողությունները

Եթե շահառուի երկիրն առկա չէ համապատասխան բացվող ցանկում, ապա ընտրեք “Այլ երկիր” և մուտքագրեք շահառու բանկի տվյալները՝ ներառյալ քաղաքը, SWIFT կոդը և/կամ բանկի կոդը: Եթե առկա չէ քաղաքը կամ բանկը, ապա ընտրեք “Այլ քաղաք/Այլ բանկ” և մուտքագրեք շահառու բանկի տվյալները՝ ներառյալ քաղաքը, SWIFT կոդը և/կամ բանկի կոդը:

Ինչպե՞ս կարող եմ դադարեցնել կամ չեղյալ համարել փոխանցում/վճարում

Եթե Դուք նշեք, որ Ձեր փոխանցումը/վճարումը կատարվի անմիջապես, ապա այլևս հնարավորություն չեք ունենա դադարեցնել այն: Բոլոր այլ ապագա կամ պարբերական փոխանցումները/վճարումները կարող են մերժվել գործարքի կատարման ամսաթվից առնվազն մեկ օր առաջ: Փոխանցում/վճարում մերժելու համար, խնդրում են էջի ձախ մասում սեղմել “Փոխանցումներ”/“Վճարումներ”, այնուհետև՝ “Ապագա փոխանցումներ”/“Ապագա վճարումներ”: Մուտքագրեք ամսաթվերը, սեղմեք “Առաջ” կոճակը, այնուհետև՝ գործարքի ամսաթվին՝ մանրամասները դիտելու համար: Սեղմեք “Հեռացնել” կոճակը՝ գործարքը դադարեցնելու համար:

Կարո՞ղ եմ արդյոք վարկի վճարումներ կատարել Ինտերնետային բանկային ծառայության միջոցով

Այո, Դուք կարող եք կատարել Ձեր վարկի վճարումները “Կատարել փոխանցում” գործառնայթի միջոցով: Պարզապես “Ստացող” մասում ընտրեք Ձեր վարկային հաշիվը: Գոյություն ունեն վարկի մարման հետևյալ տարբերակներ.

- Կարկի ամբողջական վճարում – մարել վարկի ամբողջ գումարը՝ ներառյալ մայր գումարի մնացորդը և հանձնարարականի իրականացման պահին հաշվեգրված տոկոսագումարը
- Հերթական մայր գումարի վճարում– մարել վարկի հաջորդ հերթական ամսական վճարման մասը: Խնդրում ենք ի նկատի ունենալ, որ ժամանակացույցում նշված վարկի մարման օրը Դուք պարտավորվում եք վարկի տոկոսագումարի վճարման հաշվին ապահովել բավարար միջոցներ տվյալ ամսվա կուտակված տոկոսագումարի չափով
- Մայր գումարի վճարում – կատարել վարկի մայր գումարի կանխավճար՝ առանց խախտելու մարման ժամանակացույցում նշված մարման հերթականությունը: Այս պարագայում, վճարված գումարի չափով նվազեցվում է վարկի մարման վերջին ամիսների քանակը: Եթե կանխավճարը կատարելուց հետո ցանկանում եք փոփոխել Ձեր ամսական մարման ժամանակացույցը, ապա պետք է այցելեք մեր մասնաճյուղերից որևէ մեկը:
- Ժամկետանց մայր գումարի և տոկոսի վճարում- Վճարել ժամկետանց մայր գումարը և տոկոսադրույքը

Հանձնարարականը աշխատանքային օրը մինչև ժամը 17:00-ը ներկայացնելու դեպքում այն կկատարվի նույն օրը: Նշված ժամից հետո ներկայացված հանձնարարականները կկատարվեն հաջորդ աշխատանքային օրը:



Կարող եմ արդյոք Ինտերնետային և Մոբայլ բանկային ծառայության միջոցով կատարել վճարում ՀՀ այլ բանկերին վարկային կողի առկայության դեպքում:

Հարգելի հաճախորդ,

Ինտերնետային և Մոբայլ բանկային ծառայության միջոցով «վարկային կողով» ՀՀ այլ բանկերին վճարում կատարելու համար խնդրում ենք վարկային կողը մուտքագրել «Փոխանցման նպատակ» դաշտում:

* Ստացողի հաշվեհամար չունենալու դեպքում խնդրում ենք “հաշվեհամար դաշտում” գրել «վարկային կողը» ծածկագրի հաստատման համար:

* Ի լրումն վարկային կողի՝ «Փոխանցման նպատակ» դաշտում պետք է նաև մուտքագրել ստորև նշված տարբերակներից մեկը.

1. Վարկի մայր գումարի, դրա դիմաց տոկոսի, ինչպես նաև վարկի հետ կապված տույժի (տուգանքի) վճարում
2. վարկի մայր գումարի վճարում
3. վարկի տոկոսի վճարում
4. վարկի հետ կապված տույժի, տուգանքի վճարում

Ծառայություններ

Ի՞նչ տեղեկատվություն կարող եմ ներլցնել Quicken/Money

Quicken-ը և Microsoft Money-ն անհատական ֆինանսական ծրագրային ապահովում է, որը թույլ է տալիս պատկեր ստեղծել Ձեր միջոցների հոսքի վերաբերյալ: Ներլցնել Quicken/Money գործառնությունը Ձեզ հնարավորություն է ընձեռում հեշտորեն ներլցնել Ձեր մնացորդների և գործարքների վերաբերյալ տեղեկատվությունը և ներկրել այն Quicken/Money: Պարզապես սեղմեք “Ներլցնել Quicken/Money” հղումը “Հաշիվներ” բաժնում, ընտրեք այն հաշիվը, որի տեղեկատվությունը ցանկանում եք ներլցնել, նշեք համապատասխան ամսաթվերը, ֆայլի ձևաչափը և սեղմեք “Ներլցնել”:

Ի՞նչ են էլ .քաղվածքները և էլ .ավիզոները

Ինտերնետային բանկային ծառայության հաճախորդները փոստի և էլ.փոստի փոխարեն կարող են իրենց քաղվածքները և ավիզոները ստանալ Ծառայության միջոցով: Այդ դեպքում Ձեր բանկային քաղվածքներն առաքվում են Adobe Acrobat (pdf) ֆայլի տեսքով:

Ինչպե՞ս կարող եմ դիմել էլ.քաղվածքների/էլ.ավիզոների առաքման ծառայությանը

Դիմելու համար պարզապես սեղմեք “Դիմել էլ. քաղվածքի/էլ. ավիզոյի համար” հղումը “Քաղվածքներ/Ավիզոներ” բաժնում, այնուհետև ընտրեք “Միայն էլ. քաղվածքներ” և “Միայն էլ. ավիզոներ” տարբերակները և սեղմեք “Հաստատել”:

Որքա՞ն ժամանակ են պահպանվում էլ.քաղվածքներն օնլայն եղանակով

Ձեզ ուղարկված վերջին 3 էլ. քաղվածքները միշտ կպահպանվեն Ինտերնետային բանկային ծառայությունում:

Ո՞րն է էլ. քաղվածքների/էլ. ավիզոների գործառնության օգտագործման իմաստը/առավելությունը

Օգտագործելով էլ.քաղվածքներ/էլ.ավիզոներ գործառնությո՞ւյթը՝ Դուք կստանաք դրանք անմիջապես գեներացման օրը և ստիպված չեք լինի սպասել դրանց առաքմանը փոստով: Հրաժարվելով թղթային տարբերակներից՝ Դուք նաև անմիջականորեն կաջակցեք էյչ-էս-Բի-



Սի-ի՝ շրջակա միջավայրի պահպանման նախաձեռնությանը՝ նվազեցնելով թղթի օգտագործումը:

Ինչպե՞ս դիտել էլ. քաղվածքները

Երբ էլ. քաղվածքը գեներացվում է, Ինտերնետային բանկային ծառայության Ձեր հաղորդագրությունների կենտրոն ուղարկվում է ծանուցում: Էլ. քաղվածքը դիտելու համար պարզապես սեղմեք դրա ամսաթվին "Քաղվածքներ/ Ավիզոներ" բաժնում, և այն կցուցադրվի Adobe Acrobat (pdf) ֆայլի տեսքով:

Ո՞ր են առաքվում իմ միջանկյալ քաղվածքները

Միջանկյալ քաղվածքները լրացուցիչ քաղվածքներ են, որոնց համար կարող եք դիմել Ձեր պարբերական քաղվածքների առաքման ամսաթվերի միջև ընկած ժամանակահատվածի ընթացքում: Միջանկյալ քաղվածքի պարունակությունը նույնն է, ինչ պարբերական քաղվածքինը, պարզապես դրանցում գործարքները ներկայացված են պարբերական քաղվածքի տրամադրման ամսաթվից մինչև միջանկյալ քաղվածքի դիմելու օրը: Միջանկյալ քաղվածքն առաքվում է պարբերական քաղվածքի պես:

Ո՞ր են առաքվում իմ նախորդ քաղվածքները

Ձեր նախորդ քաղվածքներն անցած ժամանակահատվածի քաղվածքներն են: Բանկի ներկայացուցիչները կապ կհաստատեն Ձեզ հետ՝ պարզելու համար նախորդ քաղվածքների առաքման Ձեր նախընտրած եղանակը: Տվյալ ծառայության գանձումները սահմանվում են համաձայն Ծառայությունների տրամադրման հիմնական պայմանների:

Որո՞նք են էլ.քաղվածքների առավելությունները

- Ձեր քաղվածքները կառաքվեն Ձեզ ավելի արագ
- Էլ.քաղվածքները կարող են պահվել Ձեր համակարգչում՝ հետագայում ցանկացած ժամանակ դիտելու հնարավորությամբ
- Նվազեցվում է թղթի օգտագործումը
- Դուք միշտ կարող եք ներլցնել Ձեր վերջին 3 էլ.քաղվածքները
- Ցանկացած ժամանակ հնարավորություն ունեք փոխել քաղվածքների առաքման եղանակը թղթայինի

Ինչպե՞ս դիմել SMS ծանուցումների ծառայությանը

SMS ծանուցումների ծառայությունն ակտիվացնելու համար էջի ձախ մասում սեղմեք "Ծանուցող ծառայություններ" հղումը, այնուհետև՝ "Փոխել ծանուցման առաքման կարգը", ընտրեք "Բջջային հեռախոս" տարբերակը, նշեք բջջային ծառայությունների Ձեր մատակարարին և մուտքագրեք բջջային հեռախոսահամարը հետևյալ ձևաչափով՝ 374XXXXXXXX (374+կոդ+բջջային հեռախոսի համարը): SMS ծանուցումների ծառայությանը կակտիվանա հաջորդ աշխատանքային օրը:

SMS ծանուցումների ծառայությանը բաժանորդագրվելու վերաբերյալ լրացուցիչ հարցեր ունենալու դեպքում խնդրում ենք զանգահարել Հեռախոսային կենտրոն +374 (60) 655 444 հեռախոսահամարով: Հեռախոսային կենտրոնի աշխատանքային ժամերն են. Մեր հեռախոսային կենտրոնն աշխատում է շուրջօրյա:

Ինչպե՞ս պատրաստել ծանուցումներ իմ հաշիվների համար

"Փոխել ծանուցման առաքման կարգը" գործառնության միջոցով առաքման կարգը սահմանելուց հետո Դուք կարող եք պատրաստել ծանուցումներ Ձեր խնայողական, ընթացիկ և

Ժամկետային ավանդի հաշիվների համար: Պարզապես սեղմեք “Պատրաստել նոր ծանուցում” հղումը և լրացրեք համապատասխան դաշտերը:

Առաջացած խնդիրների վերացում

Ինչու՞ է ժամանակ առ ժամանակ բացվում անվտանգության տեղեկատվության պատուհանը՝ հղում սեղմելիս

Այդ գործառնություն առկա է բոլոր գննարկիչներում՝ նախագրուշացնելու օգտագործողներին, որ իրենք լքում են պաշտպանված կայքը: Ինտերնետային բանկային ծառայության որոշ հղումներ ուղղում են Ձեզ էջ-Էս-Բի-Սի Բանկի կայք, և Ձեր գննարկիչը կարող է Ձեզ նախագրուշացնել այդ մասին: Պարզապես սեղմեք “Yes”՝ Ձեր աշխատանքային սեանսը շարունակելու համար:

Ինչու՞ ինձ չի հաջողվում մուտք գործել Ինտերնետային բանկային ծառայություն, եթե նախկինում դա խնդիր չէր առաջացնում

Խնդիրը շտկելու համար խնդրում ենք հեռացնել ինտերնետի օգտագործման ժամանակավոր ֆայլերը: Internet Explorer տեսակի գննարկիչներ օգտագործելու դեպքում, խնդրում ենք սեղմել “Tools”, անուիտեսև՝ “Internet Options”: Բացված պատուհանի “General” մասում սեղմեք “Delete files”, անուիտեսև՝ “OK”: Փակեք գննարկիչի բոլոր պատուհանները և կրկին փորձեք մուտք գործել:

Անվտանգություն

Ինչպե՞ս է էջ-Էս-Բի-Սի-ն ապահովում Ինտերնետային բանկային ծառայության անվտանգությունը

Ժամանակակից տեխնոլոգիաներ օգտագործելով՝ էջ-Էս-Բի-Սի-ն Ձեզ է առաջարկում Ձեր գործարքների առավելագույն ապահովությունը՝ անկախ Ձեր գտնվելու վայրից:

- 12 նիշանոց ԱԳՍ (ATM) քարտի համարի և 6 նիշանոց անձնական ծածկագրի (PIN) օգտագործում էջ-Էս-Բի-Սի-ի կայքում գրանցվելիս
- Անձնական օգտագործողի անուն ստեղծելու հնարավորություն
- Անվտանգության սարքի ծածկագրի օգտագործում՝ ապահովելու համար Ձեր տվյալների կատարյալ անվտանգություն
- Հիշվող հարցի և պատասխանի նշանակման հնարավորություն, որը, անվտանգության սարքի ծածկագրի հետ միասին, ապահովում է բանկային գործարքների առավելագույն ապահովությունը
- Անվտանգության հարցերի և պատասխանների նշանակման հնարավորություն: Այդ տվյալները պահանջվում են հիշվող հարցի և պատասխանի փոփոխման համար, այն դեպքերում, եթե Ղուք մոռանաք դրանք
- Ծառայության ավտոմատ արգելափակում մուտքի երեք անհաջող փորձի դեպքում
- Ծառայության միջոցով գործարքների օրական սահմանաչափերի նվազեցում
- Աշխատանքային սեանսի ընթացքում տեղեկատվության փոխանակման ժամանակ 128-bit ծածկագրման (encryption) օգտագործում (սա տվյալ պահի դրությամբ ծածկագրման ամենաբարձր մակարդակն է)
- Աշխատանքային սեանսի ավտոմատ դադարեցում՝ Ծառայությունից որոշ ժամանակ չօգտվելու դեպքում



Պետք է միշտ գաղտնի պահել Ինտերնետային բանկային ծառայության Ձեր անվտանգության տվյալները և երբեք չտրամադրել դրանք որևէ մեկին: Էյչ-Էս-Բի-Սի Բանկը երբևէ չի պահանջի, որպեսզի Դուք Ձեր անձնական տվյալները (անձնական ծածկագիր (PIN), հիշվող և անվտանգության հարցերի պատասխանները) տրամադրեք էլեկտրոնային փոստի միջոցով: Երբևէ մի տրամադրեք նման տվյալներ որևէ մեկին՝ այդ թվում Էյչ-Էս-Բի-Սի Բանկի աշխատակիցներին:

- Ինտերնետային բանկային ծառայություն մուտք գործելուց հետո միշտ ստուգեք, որ գննարկիչի ներքևի աջ անկյունում պատկերված է կողպեքի կամ բանալու նշան (կախված ծրագրային ապահովման տեսակից/տարբերակից՝ այդ նշանը կարող է պատկերվել նաև կայքի հասցեի կողքին)
- Այլ կայքեր այցելելուց առաջ միշտ դուրս եկեք ծառայությունից սեղմելով “Ելք”, այլ ոչ թե պարզապես փակելով Ձեր գննարկիչի պատուհանը
- Փակեք գննարկիչի պատուհանը Ծառայությունից դուրս գալուց հետո
- Համակարգչի կամ գննարկիչի ծրագրային ապահովման նոր տարբերակների հայտնվելուն պես մշտապես կիրառեք դրանք, քանի որ դրանք նախատեսված են պաշտպանելու Ձեզ անվտանգության հետ կապված հայտնի խնդիրներից

Ինչպե՞ս ստուգել 128-bit ծածկագրման (encryption) օգտագործումը

- Տեղակայեք Ձեր մկնիկը գննարկիչի ներքևի աջ անկյունի “անվտանգության կողպեք”-ի նշանին. պետք է հայտնվի փոքրիկ պատուհան՝ "SSL secured (128-bit)" պարունակությամբ
- Ջննարկիչի մենյուից ընտրեք “File”, այնուհետև՝ "Properties": Բացված պատուհանում պետք է տեսնեք "Connection TLS 1.0, RC4 with 128 bit encryption (High); RSA with 2048 bit exchange"

Ինչպե՞ս է Էյչ-Էս-Բի-Սի-ն պաշտպանում ֆիշինգից (phishing)

Ֆիշինգը դա հանցավոր գործունեության տեսակ է, որի միջոցով այլ անձինք փորձում են հաճախորդներից խաբեությամբ ձեռք բերել Ինտերնետային բանկային ծառայության տվյալները: Այդ անձինք կապ են հաստատում հաճախորդների հետ (սովորաբար էլ.փոստի, նամակների կամ հեռախոսազանգերի միջոցով) և ֆինանսական կազմակերպության անվան ներքո պահանջում տրամադրել անվտանգության տվյալները:

Հիշեք. Էյչ-Էս-Բի-Սի-ն երբևէ չի ուղարկում օգտագործողի անվան և/կամ հիշվող պատասխանի նորացման պահանջ էլ.փոստի միջոցով:

Եթե Դուք ստացել եք էլեկտրոնային նամակ/հաղորդագրություն, որը Ձեր կարծիքով կեղծ է, ապա.

- մի պատասխանեք նամակին
- վերահասցեագրեք նամակը hsbc.armenia@hsbc.com
- ջնջեք նամակը

Ի՞նչ է աշխատանքային սեանսի ավտոմատ դադարեցում գործառույթը

Աշխատանքային սեանսի ավտոմատ դադարեցման գործառույթն ապահովում է Ձեզ լրացուցիչ անվտանգությամբ այն դեպքերի համար, երբ Դուք լքում եք համակարգիչը առանց աշխատանքային սեանսն ավարտելու: Որոշ ժամանակ անց Ինտերնետային բանկային ծառայության Ձեր աշխատանքային սեանսն ավտոմատ կերպով կդադարեցվի:



Կարող եմ արդյոք ծածկագրված էլեկտրոնային նամակներ հղել Բանկին

Այո, սեղմելով “Սպասարկման կենտրոն” հղումը և այնուհետև՝ “Ուղարկել հաղորդագրություն”, Դուք կարող եք նամակներ ուղարկել Բանկ՝ հաշիվների, քարտերի, վարկերի, Ծառայության վերաբերյալ:

Ինչպե՞ս ստուգել կայքի ինքնությունը

Դուք կարող եք ստուգել անվտանգության վկայականի վավերականությունն ու այն հաստատությունը, որին տրվել է այդ վկայականը: Internet Explorer տեսակի զննարկիչներ օգտագործելու դեպքում, երկու անգամ մկնիկով սեղմեք զննարկիչի ներքևի աջ անկյունում պատկերված անվտանգության կողպեքի նշանին (կախված ծրագրային ապահովման տեսակից/տարբերակից՝ այդ նշանը կարող է պատկերվել նաև կայքի հասցեի կողքին): Բացված պատուհանի “General” մասում պետք է լինի վկայականի վերաբերյալ տեղեկատվությունը. թե ում է այն տրված (<https://www.hsbc.am>) և որքան է դրա վավերականության ժամկետը:

Թարմացվել է՝ 19/01/2019 15:00